Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2009թ. դեկտեմբերի 7-ի N 1045-Ն հրամանի

# ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0603 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

## ԳԼՈՒԽ 1.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0603 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի «Ֆինանսիստ» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության համար մասնագիտացումներ սահմանված չէ:

3. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Ֆինանսիստ» մասնագետի որակավորում:

4. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝

1) առկա,

2) հեռակա,

3) դրսեկություն (էքստեռնատ),

4) հեռավար (դիստանցիոն):

5. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) Կրթության առկա ձևով՝

ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 2 տարի,

բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով 3 տարի:

2) Կրթության հեռակա ձևով՝

միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 2 տարի,

3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական

մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 2664 ժամ է, առավելագույնը ծավալը` 4428 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0603 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտությամբ ֆինանսիստի որա-կավորմամբ մասնագետը կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները` պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տարբեր մակարդակների ֆինանսատնտեսական ծառայություններում, բանկերում և դրամավարկային, ներդրումային և ապահովագրական կազմակերպություններում, կազմակերպաիրավական բոլոր ձևերի տնտեսվարող սուբյեկտների տնտեսագիտական ծառայություններում: Նա պետք է ապահովի սոցիալական և տնտեսական տվյալների ձևավորումը, վերլուծության և գնահատման տվյալների նախապատրաստումը, հաճախորդների, գործընկերների հետ բացատրական աշխատանքների իրականացումը, մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների և մատակարարվող ապրանքների շուրջ տիպային պայմանագրերի կնքման նախապատրաստումը, առանձին դեպքերում նաև ոչ տիպային պայմանագրերի կնքման նախապատրաստումը: Նա պետք է տիրապետի գիտելիքների ֆինանսական կառավարման և շուկայավարման, հաշվետվության, խորհրդատվական, վերահսկման հիմունքներին` համապատասխան գործունեություն ծավալելու համար, նպաստի տնտեսավարող սուբյեկտների գործունեության բարելավմանը, ֆինանսատնտեսական հարաբերությունների կազմակերպմանը, աջակցի իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության և տնտեսական շահերի պաշտպանությանը: Շրջանավարտը կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները` ֆինանսական և տնտեսական ծառայությունների, վարչությունների, բաժինների կրտսեր մասնագետ և այլն:

8. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտությամբ մասնագետի` զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) Հաճախորդների և գործընկերների հետ բացատրական աշխատանքների իրականացում, անմիջական ղեկավարի հանձնարարությամբ և հսկողությամբ:
2) Ֆինանսատնտեսական փաստաթղթերի և տիպային պայմանագրերի նախապատրաստում:
3) Դրամական վճարումներին, մուտքերին, ֆինանսական և տնտեսական այլ գործառնություններին վերաբերող փաստաթղթերը կազմելու ճշտության ստուգում:
4) Բովանդակությամբ կից պարտականություններ կատարելը:

## ԳԼՈՒԽ 3.
## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0603 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի`

1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,

2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,
5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

## ԳԼՈՒԽ 4.
## ՊԱՀԱՆՋՆԵՐ 0603 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

10. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,

2) տիրապետել հայոց լեզվին,

3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,

4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,

5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,

6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,

7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,

2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ծեռքբերում:

## ԳԼՈՒԽ 5.
## ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0603 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության

պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

բ. օտար լեզվի,

գ. անհատական համակարգիչների,

դ. ֆինանսների մասնագիտացված լսարաններ:

2) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանզանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պա-րապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնա-կան տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով 0603 «Ֆինանսներ» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

## ԳԼՈՒԽ 6.
## ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0603 «ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս`

1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,

2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,

3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում` չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,

5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,

6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,

7) ընտրում է շրջանավարտների` սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

Աղյուսակ 1

Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության «Ֆինանսիստ» որակավորման մասնագետի հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| Մոդուլի դասիչը | ԱՀՀ 04 - 09 - 001 |
| Մոդուլի նպատակը | Այս մոդուլը նախատեսված է այն անձանց համար, ովքեր կարիք ունեն զարգացնելու և ամրապնդելու հաղորդակցության իրենց ունակությունները: Մոդուլը կարելի է յուրացնել ոչ միայն մասնագիտական ուսումնառությանը զուգընթաց, այլև առանձին, քանի որ այն պարունակում է ընդհանուր կրթության և անձի զարգացման տարրեր: Ավարտելով այս մոդուլը ուսանողը ձեռք կբերի հաղորդակցության համար էական նշանակություն ունեցող ունակություններ, ինքնավստահություն, որպեսզի կարողանա արդյունավետ և ակտիվ կերպով դրսևորվել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև` անձնական կյանքում: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Սահմանել ուսումնառության անձնական նպատակները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,<br>բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,<br>գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները: |
| Ուսումնառության արդյունք 2 | Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին |
| Կատարման չափանիշներ | ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,<br>բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,<br>գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային,<br>դ. հաղորդումը իրականացնում է` հաշվի առնելով իրավիճակը և լսարանը: |
| Ուսումնառության արդյունք 3 | Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, գրառումներ կատարելը, ամփոփելը),<br>բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,<br>գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,<br>դ. կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում: |
| Ուսումնառության արդյունք 4 | Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,<br>բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները,<br>գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք: |
| Ուսումնառության արդյունք 5 | Կատարել փաստաթղթավորում |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը` ըստ դրանց նշանակության (դիմում, ինքնակենսագրություն(տրված տարբեր |

| | |
|---|---|
| | տեսակի ֆորմատներով), պաշտոնական և ոչ պաշտոնական նամակներ, արձանագրություն, երաշխավորագիր և այլն),<br>բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,<br>գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ԱԱՕ04-09-002 |
| **Մոդուլի նպատակը** | Սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը,<br>բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,<br>գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը,<br>դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները,<br>ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը,<br>զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,<br>բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,<br>գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները,<br>դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,<br>բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները,<br>գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները,<br>դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ցուցաբերել առաջին օգնություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը,<br>բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը,<br>գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ,<br>դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները,<br>ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, |

| | |
|---|---|
| | գ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՀՕՊՀ-4-09-20 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսում է ծանոթացնել համակարգչի կառուցվածքին և Windows օպերացիոն համակարգին, տալ տարրական գիտելիքներ Microsoft Office փաթեթի WORD տեքստային խմբագրի և Excel հաշվարկային ծրագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, փաստաթղթերի պահպանման, տպագրման , հաշվարկային փաստաթղթեր ստեղծելու, խմբագրելու,պարզագույն խնդիրներ կազմելու և լուծելու, ինչպես նաև ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում |
| **Մոդուլի գնահատման կարգը** | մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Իմանալ համակարգչի կառուցվածքը, տիրապետել Windows օպերացիոն համակարգին |
| **Կատարման չափանիշներ** | ա. իմանալ սիստեմային բլոկի կառուցվածքը,<br>բ. իմանալ մոնիտորի կառուցվածքը,<br>գ. իմանալ մկնիկի կառուցվածքը,<br>դ. իմանալ ստեղնաշարի կառուցվածքը,<br>ե. իմանալ լրացուցիչ սարքավորումների մասին,<br>զ. իմանալ աշխատանքային սեղանը և նրա կարգավորումները, խնդիրների վահանակը, արագ թողարկման և ինդիկացիոն վահանակները և նրանց կարգավորումները, Windows օպերացիոն համակարգի օբյեկտներն ու էլեմենտները, ֆայլ, թղթապանակ և պատուհան հասկացությունները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Հասկանալ WORD և EXCEL ծրագրերի նշանակությունը, կարողանալ բացատրել ծրագրերի կառուցվածքը, կարողանալ օգտագործելNew, Open, Close և այլ՝ ստանդարտ և ֆորմատավորման վահանակների վրա գտնվող գործիքներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. իմանա Microsoft Word և Excel ծրագրերի պատուհանների կառուցվածքը,<br>բ. ստեղծել նոր փաստաթուղթ Word և Excel ծրագրերով,<br>գ. ստեղնաշարի օգնությամբ մուտքագրել՝ տեքստ (առանց ֆորմատավորման), մեծատառ նշաններ (SHIFT կոճակի օգնությամբ), սիմվոլներ (SHIFT կոճակի օգնությամբ), թվանշաններ,<br>դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ,<br>ե. կատարել տարրական ուղղումներ և խմբագրումներ տեքստում,<br>զ. փակել փաստաթուղթը,<br>է. բացել առկա փաստաթուղթը,<br>ը. մուտքագրել և կազմել հաշվարկային փաստաթղթեր: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Տեքստային և հաշվարկային փաստաթղթերի մուտքագրման, խմբագրման, ֆորմատավորման տարրական գործողությունների կատարում |
| **Կատարման չափանիշներ** | ա. նշել բառերը և տեքստային հատվածները,<br>բ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,<br>գ. կատարել տողերի հավասարեցում,<br>դ. փոխել միջտողային տարածությունները,<br>ե. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, |

| | |
|---|---|
| | գ. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,<br>է. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,<br>ը. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,<br>թ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,<br>ժ. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,<br>ժա. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ, փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի չափերը Paper Size, ցուցակի օգնությամբ,<br>ժբ. պատճենել տեքստը,<br>ժգ. տեղափոխել տեքստը,<br>ժդ. տողադարձել տեքստը,<br>ժե. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Փաստաթղթի պահպանում |
| **Կատարման չափանիշներ** | ա. իմանա փաստաթղթերի պահպանման իմաստը,<br>բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,<br>գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Աղյուսակների կազմում և խմբագրում |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատրաստել աղյուսակ,<br>բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,<br>գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,<br>դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ,<br>ե. ջնջել աղյուսակի տողերը և սյուները,<br>զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,<br>է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ,<br>ը. փոխել աղյուսակի գծերի գույնը,<br>թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Տեքստային և հաշվարկային փաստաթղթերում գրաֆիկական օբյեկտների ներդրում, դրանց հետ տարրական խմբագրման գործողությունների կատարում |
| **Կատարման չափանիշներ** | ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,<br>բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,<br>գ. գծագրել կանոնավոր պատկերներ,<br>դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխել դրանք փաստաթղթի տարբեր տարածքներ, պատճենել, պտտել, շրջել, փոխել չափերը,<br>ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,<br>զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,<br>է. գծագրել տեքստային բլոկներ,<br>ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները,<br>թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,<br>ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները: |
| **Ուսումնառության արդյունք 7** | Կարողանալ տպագրել փաստաթուղթը |

| | |
|---|---|
| Կատարման չափանիշներ | ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,<br>բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,<br>գ. տպագրել փաստաթուղթը: |
| Ուսումնառության արդյունք 8 | Ինտերնետում աշխատելու իմացություն |
| Կատարման չափանիշներ | ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,<br>բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,<br>գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը,<br>դ. իմանալ History հրամանի նշանակությունը,<br>ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,<br>զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,<br>է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,<br>ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,<br>թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,<br>ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,<br>ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,<br>ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,<br>ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,<br>ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,<br>ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ: |

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության «Ֆինանսիստ» որակավորման մասնագետի հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» | |
|---|---|
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ-4-09-001 |
| Մոդուլի նպատակը | տրամադրել ուսանողին ֆինանսական ոլորտի օրենսդրական դաշտի, ֆինանսների կազմակերպման առաջնային գիտելիքներ: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Մոդուլն ուսումնասիրելու համար նախնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կարողանա ֆինանսները ընկալել որպես գնահատման և կանխատեսումների կայացմանն աջակցող համակարգ |
| Կատարման չափանիշներ | ա. կարողանում է բնութագրել ֆինանսական համակարգի խնդիրներն ու նպատակը,<br>բ. կարողանում է բնորոշել ֆինանսները կազմող դրամական հարաբերությունների խմբերը,<br>գ. բնորոշում է ֆինանսական հարաբերությունների մասնակիցներին: |
| Ուսումնառության արդյունք 2 | Պետք է իմանա ՀՀ Սահմանադրության և քաղաքացիական օրենսգրքի հիմնարար դրույթները՝ նվիրված ֆինանսական ոլորտի կարգավորմանը |
| Կատարման չափանիշներ | ա. սահմանում է օրենքների գործողության ոլորտը,<br>բ. ներկայացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և գործառնությունների |

| | |
|---|---|
| | շրջանակները,<br>գ. սահմանում է ձեռնարկատիրական գործունեությունը և կազմակերպաիրավական տեսակները,<br>դ. ներկայացնում է սեփականության տեսակների տնտեսական և ֆինանսական հիմքերը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա ֆինանսական համակարգի նկարագիրը և օղակներից յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների պարզաբանումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատկերացում է կազմում ֆինանսական համակարգի ընդհանուր նկարագրի վերաբերյալ,<br>բ. իմանում է ֆինանսական համակարգի օղակները և դրանց առջև դրված խնդիրները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՖԻՆ-4-09-002 |
| **Մոդուլի նպատակը** | Տրամադրել ուսանողին բավարար չափով գիտելիքներ և ունակություններ տնտեսագիտության տեսության վերաբերյալ |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Գիտի տնտեսագիտության առարկայի էությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել տնտեսագիտության առարկան,<br>բ. բնութագրել տնտեսագիտական հետազոտման մեթոդաբանությունը,<br>գ. ներկայացնել կազմակերպությունների տնտեսական գործունեության և երկրի էկոնոմիկայի վերլուծական կապը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Գիտի ապրանքադրամական հարաբերությունների հիմունքները |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել ապրանքը,<br>բ. բացահայտել փոխանակման անհրաժեշտությունը,<br>գ. ներկայացնել փողի ծագման նախադրյալները և գործառույթները,<br>դ. ներկայացնել ապրանքադրամական հարաբերությունների տեղը և դերը տնտեսական հարաբերությունների համալիրում: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Կշռել ստացված ծուլակտորը և կատարել գրանցում, |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել սեփականության ձևերը,<br>բ. բնութագրել սեփականության իրավունքի հիմունքները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Իմանալ համախառն ներքին արդյունք և ազգային եկամուտ |
| **Կատարման չափանիշներ** | ա. մեկնաբանել ազգային եկամուտ և համախառն ներքին արդյունք հասկացությունները,<br>բ. բնութագրել տնտեսական աճը,<br>գ. մեկնաբանել ազգային հաշիվները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՖԻՆ-4-09-003 |
| **Մոդուլի նպատակը** | Ուսանողը պետք է տիրապետի ֆինանսների կազմակերպման, կառավարման սկզբունքներին, տարբերակի ֆինանսական կառույցների գործունեության շրջանակները |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՖԻՆ-4-09-001» և «ՖԻՆ-4-09-002» մոդուլների իմացություն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Սահմանի ֆինանսների առաջացման նախադրյալները և գործառույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրի ֆինանսները, |

| | |
|---|---|
| | բ. ուսումնասիրի ֆինանսների առաջացման նախադրյալները,<br>գ. մեկնաբանի ֆինանսների գործառույթների մեխանիզմը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իմանա պետական, մունիցիպալ, մասնավոր և տնային տնտեսությունների ֆինանսների կազմակերպման սկզբունքները |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել պետական ֆինանսները,<br>բ. բնութագրել տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսները,<br>գ. բնութագրել մասնավոր և տնային տնտեսությունների ֆինանսները,<br>դ. բնութագրել պետական, մունիցիպալ, մասնավոր և տնային տնտեսությունների միջև ֆինանսական փոխհարաբերությունները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Ներկայացնել ֆինանսների կառավարման մեխանիզմի և կառավարման մարմինների լիազորությունները և գործառույթները |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել ֆինանսների կառավարման մեխանիզմը,<br>բ. բնութագրել ֆինանսների կառավարման խնդիրներն ու նպատակները,<br>գ. ներկայացնել կառավարման մարմինների լիազորությունների շրջանակները և սահմանել գործառույթները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Ներկայացնի ֆինանսական վերահսկողության մարմինները |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնել և բնութագրել ֆինանսական վերահսկողության մարմինները,<br>բ. թվարկել ֆինանսական վերահսկողության մարմիններից յուրաքանչյուրի դերը և խնդիրները,<br>գ. բնութագրել ֆինանսական վերահսկողության մարմինների տեղը ֆինանսական հարաբերությունների համակարգում: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ-4-09-004 |
| Մոդուլի նպատակը | Ուսանողը պետք է տիրապետի հաշվապահական հաշվառման վարման, ինչպես նաև հաշվետվությունների լրացման և վերլուծության հմտություններին: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | «ՖԻՆ-4-09-002» մոդուլի իմացություն |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| Ուսումնառության արդյունք 1 | Պետք է իմանա հաշվապահական հաշվառման էությունը և մեթոդը |
| Կատարման չափանիշներ | ա. սահմանել հաշվապահական հաշվառման էությունը, սկզբունքները, խնդիրները, առարկան և օբյեկտները,<br>բ. ներկայացնել հաշվապահական հաշվառման մեթոդը, նրա տարրերի համառոտ բնութագրումը,<br>գ. ներկայացնել հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների կազմման սկզբունքները |
| Ուսումնառության արդյունք 2 | Պետք է իմանա հաշվապահական հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն |
| Կատարման չափանիշներ | ա. մեկնաբանել տեղեկատվության ամփոփման և կրկնակի արտացոլման հաշվեկշռային մեթոդը, դրա դերն ու նշանակությունը,<br>բ. ներկայացնել հաշվեկշռի և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության կառուցվածքն ու բովանդակությունը, կազմման սկզբունքները,<br>գ. ներկայացնել հաշվապահական հաշիվներ, դրանց կառուցվածքը, տեսակները և գրանցումներ կատարելու կարգը,<br>դ. սահմանել կրկնակի գրանցման էությունը և ֆունկցիաները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Պետք է իմանա հաշվապահական հաշվառման հաշիվների դասակարգումը |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել հաշիվների դասակարգումը ըստ տնտեսական բովանդակության և կառուցվածքի,<br>բ. ներկայացնել հաշվապահական հաշվառման հաշիվների պլանի էությունը, կառուցվածքը և բովանդակությունը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Պետք է իմանա պաշարների հաշվառումը |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնել պաշարների դասակարգումն ու գնահատումը,<br>բ. ներկայացնել պաշարների անընդհատ և պարբերաբար կատարվող գրանցումները, |

| | |
|---|---|
| | գ. բնութագրել նյութերի և արագամաշ առարկաների շարժի հաշվառումը,<br>դ. ներկայացնել պատրաստի արտադրանքի գնահատումը,<br>ե. սահմանել պաշարների վերագնահատման և գույքագրման արդյունքների հաշվառումը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Պետք է իմանա դեբիտորական պարտքի հաշվառումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել դեբիտորական պարտքերի դասակարգումն ու գնահատումը,<br>բ. ներկայացնել անհուսալի պարտքեր և կասկածելի պարտքեր, անհուսալի պարտքերի դուրս գրում և վերականգնում,<br>գ. ներկայացնել կանխավճարների հաշվառումը: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Պետք է իմանա ոչ ընթացիկ նյութական ակտիվների հաշվառումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել հիմնական միջոցների դասակարգումը, գնահատումը և հաշվառումը,<br>բ. ներկայացնել հիմնական միջոցների մաշվածության հաշվառումը,<br>գ. ներկայացնել հիմնական միջոցների նորոգման ծախսերի և կապիտալացվող ծախսումների հաշվառումը,<br>դ. ներկայացնել հիմնական միջոցների վերագնահատման ու գույքագրման արդյունքների հաշվառումը: |
| **Ուսումնառության արդյունք 7** | Պետք է իմանա պարտավորությունների հաշվառումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. մեկնաբանել պարտավորությունների դասակարգումը,<br>բ. ներկայացնել երկարաժամկետ ու կարճաժամկետ վարկերի և փոխառությունների հաշվառումը,<br>գ. ներկայացնել աշխատանքի վարձատրության գծով պարտավորությունների հաշվառումը,<br>դ. Սահմանել առհաշիվ անձանց հետ հաշվարկների հաշվառումը: |
| **Ուսումնառության արդյունք 8** | Պետք է իմանա եկամուտների և ծախսերի հաշվառումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել գործառնական եկամուտների և ծախսերի դասակարգումն ու հաշվառումը,<br>բ. ներկայացնել ոչ գործառնական եկամուտների և ծախսերի դասակարգումն ու հաշվառումը,<br>գ. ներկայացնել արտասովոր ծախսերի հաշվառումը: |
| **Ուսումնառության արդյունք 9** | Պետք է իմանա սեփական կապիտալի հաշվառումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել կանոնադրական կապիտալի հաշվառումը,<br>բ. ներկայացնել ֆինանսական հետևանքի հաշվառումը,<br>գ. ներկայացնել պարտադիր պահուստների ձևավորման հաշվառումը: |
| **Ուսումնառության արդյունք 10** | Պետք է իմանա ֆինանսական հաշվետվություններ, դրամական հոսքերի մասին հաշվետվություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել ֆինանսական հաշվետվության կառուցվածքը,<br>բ. ներկայացնել դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության պատրաստման առանձնահատկությունները: |

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» | |
|---|---|
| **Մոդուլի դասիչը** | ՖԻՆ- 4-09– 005 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլը նախատեսում է տալ ֆինանսաբանկային ոլորտում աշխատող մասնագետին անհրաժեշտ գիտելիքներ մաթեմատիկական հաշվարկներ կատարելու համար, ուսանողի մոտ զարգացնել տրամաբանելու, ֆինանսական խնդիրների մոդելավորման տարրական եղանակների, ֆունկցիայի ածանցյալի և ինտեգրալի և մոտավոր հաշվարկների եղանակների կիրառման հմտությունները: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |

| | |
|---|---|
| Ուսումնառության արդյունք 1 | Պետք է կարողանա լուծել գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգեր և տալ դրանց գրաֆիկական մեկնաբանումը |
| Կատարման չափանիշներ | ա. լուծել գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգեր,<br>բ. տալ գծային և քառակուսային հավասարումներ և անհավասարություններ, հավասարումների համակարգերի լուծումների գրաֆիկական մեկնաբանումը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Պետք է կարողանա վերլուծել գծային և քառակուսային հավասարումների և անհավասարությունների, հավասարումների համակարգերի լուծումները |
| Կատարման չափանիշներ | ա. վերլուծել գծային և քառակուսային հավասարումների լուծումները,<br>բ. վերլուծել հավասարումների համակարգի լուծումները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Պետք է կարողանա կիրառել թվաբանական և երկրաչափական պրոգրեսիաների գումարի բանձևերը ֆինանսական խնդիրները լուծելիս |
| Կատարման չափանիշներ | ա. թվաբանական պրոգրեսիայի օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում,<br>բ. Երկրաչափական պրոգրեսիայի օրինաչափությունների կիրառումը ֆինանսական խնդիրներում: |
| Ուսումնառության արդյունք 4 | Պետք է իմանա տոկոսների տեսության էությունը |
| Կատարման չափանիշներ | ա. պարզ տոկոսային հաշվարկների հիմնական բանաձևերը,<br>բ. բարդ տոկոսային հաշվարկների հիմնական բանաձևերը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Պետք է իմանա մոտավոր հաշվարկների եղանակները |
| Կատարման չափանիշներ | ա. գծային ինտերպոլյացիայի եղանակ,<br>բ. գծային ինտերպոլյացիայի եղանակով պարամետրերի և գործակիցների հաշվարկ,<br>գ. իտեռացիաների եղանակ,<br>դ. Իտեռացիաների եղանակով բարձր աստիճանի հավասարումների լուծում: |
| Ուսումնառության արդյունք 6 | Պետք է կարողանա կիրառել ֆունկցիայի սահմանի գաղափարը իրական խնդիրներում |
| Կատարման չափանիշներ | ա. ֆունկցիայի սահմանի սահմանումը և իմաստը,<br>բ. ֆունկցիայի սահմանի հաշվարկների պարզ եղանակները: |
| Ուսումնառության արդյունք 7 | Պետք է կարողանա կիրառել ֆունկցիայի ածանցյալը ֆինանսական խնդիրներում |
| Կատարման չափանիշներ | ա. ֆունկցիայի ածանցյալի սահմանումը,<br>բ. ֆունկցիայի ածանցյալի երկրաչափական իմաստը,<br>գ. ֆունկցիայի էկստրեմումները՝ մաքսիմումը, մինիմումը և շրջման կետը: |
| Ուսումնառության արդյունք 8 | Պետք է կարողանա կատարել տարրական ֆունկցիաների վերլուծություն |
| Կատարման չափանիշներ | ա. ֆունկցիայի ածանցյալի կիրառումը ֆունկցիաների վերլուծության մեջ,<br>բ. ֆունկցիայի ածանցյալի դերը ֆունկցիայի էության պարզաբանման մեջ,<br>գ. ֆունկցիայի ածանցյալի դերը ֆունկցիաների գծապատկերների կառուցման մեջ: |
| Ուսումնառության արդյունք 9 | Պետք է կարողանա կիրառել ֆունկցիայի ինտեգրալը ֆինանսական խնդիրներում |
| Կատարման չափանիշներ | ա. ֆունկցիայի ինտեգրալի իմաստը,<br>բ. ինտեգրալի կիրառման օրինակները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»** | |
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ-4-09-006 |
| Մոդուլի նպատակը | Ուսանողին տրամադրել գիտելիքներ, որով նա կարողանա հաշվարկել, գնահատել և վերլուծել ֆինանսական՝ մասնավորապես բանկային և արժեթղթերով գործառնությունները, կատարել գործարարական առաջարկների և կազմակերպությունների ֆինանսական վիճակի պարզ վերլուծություն: |

| | |
|---|---|
| **Մոդուլի տևողությունը** | 108 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈՍԿ-3-08-001, ՈՍԿ-3-08-002 մոդուլները |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա մոտավոր հաշվարկների կիրառման հմտությունը ֆինանսական հաշվարկների և վերլուծության մեջ |
| **Կատարման չափանիշներ** | ա. իմանա մոտավոր հաշվարկների գծային ինտերպոլյացիայի եղանակը,<br>բ. Իմանա մոտավոր հաշվարկների իտեռացիաների եղանակը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա ֆինանսային մաթեմատիկայի հիմունքները և տոկոսների տեսությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է իմանա տոկոսների տեսությունը,<br>բ. պետք է իմանա պարզ և բարդ տոկոսադրույքներ,<br>գ. պետք է իմանա հաշվառման (դիսկոնտավորման) տոկոսադրույքներ,<br>դ. պետք է կարողանա որոշել իրական տոկոսադրույքների սղաճի և հարկերի առկայության դեպքում: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա դրամական հոսքերը, նրանց գնահատումը և վերլուծությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է կարողանա կատարել պարբերական անդամներով ֆինանսական հոսքերի ռենտաների հետ կապված կարևորագույն մեծությունների հաշվարկներ,<br>բ. պետք է կարողանա որոշել ներհոսող (միջոցների շրջանառությունից) և արտահոսող (ծախսերը, ներդրումները և այլ վճարային պարտավորությունները) գումարները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է կարողանա իրականացնել վարկային գործառնությունների հաշվարկներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է կարողանա իրականացնել անուիտետների հաշվարկը բարդ տոկոսներով,<br>բ. պետք է կարողանա իրականացնել երկարաժամկետ վարկերի հետ կապված հաշվարկներ,<br>գ. պետք է կարողանա իրականացնել տարբեր տեսակի վարկերի տարբեր եղանակներով մարման,<br>դ. Պետք է կարողանա իրականացնել պլանների կազմում: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Պետք է կարողանա իրականացնել ֆինանսավարկային գործառնությունների հաշվեկշռային հավասարում |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է կարողանա իրականացնել ֆինանսական համարժեքության սկզբունքի կիրառում ֆինանսական գործառնությունների հաշվարկներում,<br>բ. պետք է կարողանա իրականացնել հաշվեկշռային հավասարումների լուծում,<br>գ. պետք է կարողանա իրականացնել ֆինանսական գործառնությունների եկամտաբերության հաշվարկ: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Պետք է կարողանա իրականացնել սղաճի առկայության դեպքում ֆինանսական հաշվարկներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է կարողանա իրականացնել սղաճի ինդեքսի և տեմպի հաշվարկներ և նրանց կապը ազգային արժույթի արժեզրկման ինդեքսի և տեմպի հետ,<br>բ. պետք է կարողանա իրականացնել ռենտաների հաշվարկները սղաճի արկայության դեպքում,<br>գ. պետք է կարողանա իրականացնել եկամտաբերության հաշվարկը սղաճի արկայության դեպքում: |
| **Ուսումնառության արդյունք 7** | Պետք է կարողանա իրականացնել արժեթղթերի գնահատում և շահութաբերության որոշում |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է կարողանա իրականացնել տարբեր տեսակի արժեթղթերի փոխարժեքների հաշվարկ,<br>բ. պետք է կարողանա արժեթղթերով գործարքներ կատարելիս ճիշտ կողմնորոշվել, ելնելով նրանց գնահատման և շահութաբերության ֆինանսական ցուցանիշներից,<br>գ. պետք է իմանա արժեթղթերի հիմնական պարամետրերը և դրանց գնահատման ցուցանիշների հաշվարկներում օգտագործել,<br>դ. պետք է կարողանա ներդրումային ծրագրերի արդյունավետությունը և այն անհրաժեշտ հաշվարկներով հիմնավորել: |
| **Ուսումնառության արդյունք 8** | Պետք է կարողանա իրականացնել գործարարական առաջարկների վերլուծություն և հաշվարկներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է իմանա ներդրումային նախագծերի վերլուծության ստատիկ և դինամիկ պարամետրերը, |

| | |
|---|---|
| | բ. պետք է կարողանա ներդրումային ծրագրերի արդյունավետությունը որոշել և այն անհրաժեշտ հաշվարկներով հիմնավորել: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ EXCEL ԿԾՓ-Ի ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ» | |
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ-4-09-007 |
| Մոդուլի նպատակը | «Ֆինանսական հաշվարկներ EXCEL ԿԾՓ-ի միջավայրում» մոդուլի նպատակն է մատուցել ունկնդրին ֆինանսա-բանկային ոլորտի գործնական խնդիրների մոդելավորման և լուծման մեթոդիկային EXCEL ԿԾՓ-ի միջավայրում, որին շուկայական տնտեսության պայմաններում պարտադիր պետք է տիրապետեն բոլոր գրագետ մասնագետները: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Համակարգչի և «ՖՄ-4-09-006» մոդուլի իմացություն |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |
| Ուսումնառության արդյունք 1 | Կարողանա կիրառել EXCEL ԿԾ Փաթեթում ներմուծված ֆինանսական, մաթեմատիկական, վիճակագրական տրամաբանական կատեգորիաների ֆունկցիաները ֆինանսական խնդիրների մոդելավորման և լուծման գործընթացում և ստեղծել լուծման մինի ծրագրեր |
| Կատարման չափանիշներ | ա. իմանալ ֆինանսական ֆունկցիաների դերը և նշանակությունը ֆինանսական խնդիրների լուծման ընթացքում,<br>բ. իմանալ մաթեմատիկական, վիճակագրական և տրամաբանական կատեգորիաների ֆունկցիաների կիրառման հնարավորությունները ֆինանսական խնդիրների լուծման ընթացքում: |
| Ուսումնառության արդյունք 2 | Իրականացնել տարրական ֆինանսական հոսքերի հաշվարկներ պարզ և բարդ տոկոսների դեպքում, էությամբ տարբեր տոկոսադրույքների հաշվարկներ |
| Կատարման չափանիշներ | ա. իմանալ կապիտալի աճեցման օրենքների վերաբերյալ խնդիրների լուծման մեթոդիկան պարզ և բարդ դրույքների դեպքում,<br>բ. իմանալ կապիտալի դիսկոնտավորման խնդիրների լուծումը EXCEL-ում,<br>գ. իմանալ անվանական, հարաբերական, հավասարեցնող և էֆեկտիվ տոկոսադրույքների հաշվարկները,<br>դ. իմանալ ֆինանսական համարժեքության սկզբունքը և անպարբերական ֆինանսական հոսքերի վերաբերյալ խնդիրների լուծման մեթոդիկան,<br>ե. իմանալ կարճաժամկետ վարկերի մարման վերաբերյալ խնդիրների լուծումը: |
| Ուսումնառության արդյունք 3 | Իրականացնել պարբերական ֆինանսական հոսքերի՝ ռենտաների ամփոփիչ բնութագրիչների հաշվարկներ պարզ և բարդ տոկոսադրույքների դեպքում |
| Կատարման չափանիշներ | ա. հաստատուն ռենտայի աճեցրած արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում,<br>բ. հաստատուն ռենտայի զեղչված արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում,<br>գ. հետաձգված հաստատուն ռենտայի ընթացիկ արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում,<br>դ. փոփոխական ռենտայի աճեցրած արժեքի հաշվարկները տարբեր ելակետային տվյալների դեպքում: |
| Ուսումնառության արդյունք 4 | Իրականացնել երկարաժամկետ վարկերի հետ կապված հաշվարկներ, տարբեր եղանակներով վարկերի մարման պլանների կազմում |
| Կատարման չափանիշներ | ա. իմանալ երկարաժամկետ վարկերի դրամահոսքային (անուիտետային) տարբեր եղանակներով մարման խնդիրների լուծման մեթոդիկան,<br>բ. իմանալ հիփոթեքային վարկ, նրա մարումը և մարման պլանի կազմում,<br>գ. իմանալ սպառողական վարկերի մարման պլանի կազմումը,<br>դ. իմանալ երկարաժամկետ վարկերի մարումը նախօրոք որոշված մեծությամբ դրամահոսքերով,<br>ե. իմանալ վարկի մարման ընթացքում պարտքի մնացորդի հաշվարկը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իրականացնել ֆինանսավարկային գործառնությունների եկամտաբերության հաշվարկներ |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | ա. իրականացնել եկամտաբերության հաշվարկը էֆեկտիվ տոկոսադրույքի միջոցով,<br>բ. իրականացնել բանկային գործառնությունների եկամտաբերության հաշվարկը,<br>գ. Իրականացնել ֆինանսական գործարքի եկամտաբերության հաշվարկը,<br>դ. Իրականացնել եկամտաբերության հաշվարկը շահութահարկի առկայության դեպքում: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Իրականացնել ֆինանսավարկային գործառնությունների հաշվարկները սղաճի առկայության դեպքում |
| **Կատարման չափանիշներ** | ա. իմանալ սղաճի տեմպի և ինդեքսի կապը ազգային արժույթի արժեզրկման տեմպի հետ,<br>բ. իմանալ սղաճի պայմաններում ռենտայի ապագա արժեքի հաշվարկները,<br>գ. իմանալ վարկային գործառնությունների հաշվարկները սղաճի առկայության դեպքում,<br>դ. իմանալ եկամտաբերության հաշվարկը սղաճի առկայության դեպքում: |
| **Ուսումնառության արդյունք 7** | Իրականացնել արժեթղթերի փոխարժեքների և եկամտաբերության հաշվարկներ |
| **Կատարման չափանիշներ** | ա. իրականացնել պարտատոմսերի փոխարժեքի և եկամտաբերության հաշվարկները,<br>բ. իրականացնել բաժնետոմսերի հետ կապված հաշվարկները,<br>գ. իրականացնել մուրհակների հետ կապված հաշվարկները,<br>դ. իրականացնել դյուրացիայի հաշվարկը: |
| **Ուսումնառության արդյունք 8** | Իրականացնել ներդրումային և լիզինգային նախագծերի արդյունավետության վերլուծություն և գնահատում |
| **Կատարման չափանիշներ** | ա. իմանալ զուտ ընթացիկ արժեքի և եկամտաբերության ներքին դրույքի կիրառումը ներդրումային նախագծերի վերլուծության համար,<br>բ. իմանալ զուտ ընթացիկ արժեքի և եկամտաբերության ներքին դրույքի կիրառումը լիզինգային նախագծերի վերլուծության համար: |
| **Ուսումնառության արդյունք 9** | Իրականացնել ֆինանսներում տարբեր մեծությունների միջին արժեքների հաշվարկները և այդ հաշվարկների առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. իրականացնել փոփոխական պարզ և բարդ դրույքների միջին արժեքի հաշվարկը,<br>բ. իրականացնել սղաճի տեմպի և ազգային արժույթի արժեզրկման տեմպի միջին արժեքի հաշվարկը,<br>գ. իրականացնել մեծությամբ փոփոխվող ավանդների միջին արժեքի հաշվարկը,<br>դ. իրականացնել կամայական պահերի կատարված վճարումների միջին ժամկետի հաշվարկը,<br>ե. իրականացնել եկամտաբերության միջին արժեքի հաշվարկը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՖԻՆ-4-09-008 |
| **Մոդուլի նպատակը** | Տրամադրել ուսանողին ՀՀ հարկային օրենսդրության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, որը հնարավորություն կտա ուսանողին մասնագիտական գործունեությունը իրականացնել օրենսդրության տառին համապատասխան: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՖԻՆ-4-09-003» մոդուլների իմացություն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա «Հարկային օրենսդրության հիմունքներ և սկզբունքներ» |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանվող Հայաստանի Հանրապետությունում հարկ, հարկային գործակալ հասկացությունները,<br>բ. ներկայացնել հարկերի և հարկային արտոնությունների տեսակները, հարկ վճարողների իրավունքները և պարտականությունները, հարկային վեճերի լուծման կարգը, ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները |

| | |
|---|---|
| | կարգավորող մյուս իրավական պահանջների խախտումների համար պատասխանատվությունը,<br>գ. ներկայացնել Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի հիմքում դրված սկզբունքների էությունը` հարկի վճարման կամովիության սկզբունք, հարկադրանքի սկզբունք, հարկային համակարգի կանխատեսելիության սկզբունք, արդարության սկզբունք: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա «ՀՀ գործող հարկային ռեժիմները և հարկատեսակները» |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել ՀՀ-ում գործող հարկման ռեժիմները` ընդհանուր հարկման ռեժիմ և հաստատագրված վճարով հարկման ռեժիմ,<br>բ. ներկայացնել ՀՀ հարկատեսակների` շահութահարկի, եկամտահարկի, ակցիզային հարկի, ավելացված արժեքի հարկի, գույքահարկի, հողի հարկի էությունը,<br>գ. սահմանել հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը,<br>դ. ներկայացնել հաստատագրված վճարի դրույքաչափերը,ե. հավաքված շինվածքը համապատասխանում է աշխատանքային էսքիզին: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա «Շահութահարկի մասին օրենք» |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել շահութահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները,<br>բ. որոշել հարկվող շահույթը,<br>գ. կիրառել նվազեցումները և դրույքաչափերը,<br>դ. Իմանալ արտոնությունները, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հարկման առանձնահատկությունները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է մեկնաբանի «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել եկամտահարկ վճարողներին և հարկվող օբյեկտները,<br>բ. որոշել հարկվող եկամուտը,<br>գ. կիրառել նվազեցումները և դրույքաչափերը,<br>դ. իմանալ արտոնությունները, ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների, անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ հարկման առանձնահատկությունները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Պետք է մեկնաբանի «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել ԱԱՀ վճարողներին, հարկվող, չհարկվող և հարկից ազատված գործարքները,<br>բ. որոշել հարկվող շրջանառությունը,<br>գ. ներկայացնել դրույքաչափերը: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Պետք է մեկնաբանի «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները և հարկ վճարողներին,<br>բ. բնութագրել ակցիզային հարկով հարկման օբյեկտը և բազան,<br>գ. ներկայացնել դրույքաչափերը և արտոնությունները: |
| **Ուսումնառության արդյունք 7** | Պետք է մեկնաբանի «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել գույքահարկ վճարողներին և հարկվող օբյեկտներն ու բազան,<br>բ. ներկայացնել դրույքաչափերը և արտոնությունները: |
| **Ուսումնառության արդյունք 8** | Պետք է մեկնաբանի «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել հողի հարկ վճարողներին և հարկման օբյեկտները,<br>բ. ներկայացնել դրույքաչափերը: |
| **Ուսումնառության արդյունք 9** | Պետք է իմանա «Սոցիալական և պարտադիր այլ վճարներ» |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել սոցիալական վճարներ կատարողներին և սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտները,<br>բ. ներկայացնել դրույքաչափերը,<br>գ. ներկայացնել անհատ ձեռնարկտիրության մասով սոցիալական վճարների հաշվարկման առանձնահատկությունները: |

| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» | |
|---|---|
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ-4-09-009 |
| Մոդուլի նպատակը | Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ ապահովագրական գործունեության վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | «ՖԻՆ-4-09-003» մոդուլի իմացություն |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |
| Ուսումնառության արդյունք 1 | Պետք է իմանա ապահովագրության տնտեսական բովանդակությունը |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնել ապահովագրության նախադրյալներն ու անհրաժեշտությունը,<br>բ. ներկայացնել ապահովագրության տեղը և դերը ֆինանսական հատվածում,<br>գ. թվարկել և բնութագրել ապահովագրության մասնակիցներին: |
| Ուսումնառության արդյունք 2 | Պետք է իմանա ապահովագրության տեսակները |
| Կատարման չափանիշներ | ա. սահմանել ապահովագրական ռիսկը,<br>բ. թվարկել և բնութագրել ռիսկի տեսակները,<br>գ. դասակարգել ապահովագրության տեսակները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Պետք է իմանա կյանքի ապահովագրությունը |
| Կատարման չափանիշներ | ա. սահմանել կյանքի ապահովագրությունը,<br>բ. թվարկել և բնութագրել կյանքի ապահովագրության տեսակները,<br>գ. մեկնաբանել կյանքի ապահովագրության պայմանագրի պայմանները և դրույթները: |
| Ուսումնառության արդյունք 4 | Պետք է իմանա ոչ կյանքի ապահովագրությունը |
| Կատարման չափանիշներ | ա. սահմանել ոչ կյանքի ապահովագրությունը,<br>բ. թվարկել և բնութագրել ոչ կյանքի ապահովագրության տեսակները,<br>գ. մեկնաբանել ոչ կյանքի ապահովագրության պայմանագրի պայմանները և դրույթները: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ- 4-09-010 |
| Մոդուլի նպատակը | Ուսանողը պետք է ծանոթանա բանկային գործի ծագման և զարգացման պատմությանը, բանկերի տեսակների, առանձնահատկությունների և գործառույթների հետ, իմանա Կենտրոնական Բանկի դերը բանկային համակարգում, բանկերի կողմից իրականացվող բանկային ֆինանսական գործառնությունները, բանկերի միջոցների գոյացման աղբյուրները, բանկային ակտիվների և պասիվների կառավարման սկզբունքները: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| Ուսումնառության արդյունք 1 | Պետք է իմանա բանկերի ծագումը և պատմական զարգացումը |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնել բանկային գործի ծագման հիմնապատճառները և հետագա զարգացումը,<br>բ. ներկայացնել ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման պատմությունը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Պետք է իմանա բանկերի էությունը և գործառույթները |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել բանկերի էությունը՝ որպես առանձնահատուկ տնտեսավարող սուբյեկտ,<br>բ. ներկայացնել բանկերի կողմից իրականացվող գործառույթները և գործառնությունները: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա բանկերի համակարգը, տեսակները, կառուցվածքը և կառավարումը; |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել բանկային համակարգը մի շարք զարգացած երկրներում և Հայաստանի Հանրապետությունում,<br>բ. տալ բանկերի դասակարգումը` ըստ հատկանիշների,<br>գ. բացատրել առևտրային բանկերի կառուցվածքը և կառավարումը,<br>դ. ներկայացնել բանկերի կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործառույթները և կառավարման մարմինների իրավասությունները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է իմանա բանկերի գործունեության հիմունքները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել բանկերի գործունեության ընդհանուր կողմերը, այդ թվում` ռեսուրսների ձևավորումը և տեղաբաշխումը,<br>բ. ներկայացնել ակտիվների որակը, շահութաբերությունը, իրացվելիությունը և վճարունակությունը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Պետք է իմանա բանկերի գործունեության կարգավորման հիմունքները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել բանկերի գործունեության կարգավորման հիմունքները,<br>բ. ներկայացնել ՀՀ բանկերի գործունեությունը կարգավորող իրավական և տնտեսական նորմատիվները: |
| **Ուսումնառության արդյունք 6** | Պետք է իմանա ՀՀ բանկային համակարգի զարգացման միտումները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել բանկային համակարգի զարգացման միտումները,<br>բ. ներկայացնել բանկային համակարգի հիմնական ցուցանիշների վրա ազդող գործոնները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԳԼԵՐԵՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՖԻՆ-4-09-011 |
| **Մոդուլի նպատակը** | Այս մոդուլն ուսումնասիրելիս ուսանողը պետք է ծանոթանա ֆինանսներ, բանկային գործ, տնտեսագիտություն, ինչպես նաև անգլերեն լեզվով հրատարակվող համապատասխան մասնագիտական գրականությանը: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Կարողանալ հաղորդակցվել անգլերեն լեզվով ֆինանսաբանկային համակարգում կիրառելով միջազգային հարաբերությունների վերաբերյալ փաստաթղթերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ թարգմանություններ կատարել թե բանավոր, թե գրավոր խոսքում,<br>բ. ճիշտ լրացնել բանկային գործառնություններին վերաբերվող փաստաթղթերը անգլերեն լեզվով, գրել նամակներ և հաղորդակցվել բանկի հաճախորդների հետ: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Տարբերել ֆինանսական ինստիտուտները և բանկերը, դասակարգել դրանք |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ ներկայացնել բանավոր խոսքը,<br>բ. երկխոսությունների միջոցով բավարարել հաճախորդի հարցադրումները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ներկայացնել պահանջված փաստաթղթերը անգլերեն լեզվով և կարողանալ հաճախորդին բացատրել դրանց լրացման կարգը, բնութագրել բանկի կամ տվյալ կազմակերպության աշխատանքի սկզբունքները և նրանց ներկայացվող պահանջները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ կարդալ և արտասանել ֆինանսական և բանկային տերմինները,<br>բ. ճիշտ ներկայացնել տեքստի թարգմանությունը և հարցերին պատասխանել,<br>գ. ճիշտ լրացնել ֆինանսական և բանկային նամակների թարգմանչական պահանջները,<br>դ. ճիշտ կողմնորոշվել երկխոսությունների մեջ: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ներկայացնել տնտեսագիտության կապը և անհրաժեշտությունը ֆինանսական համակարգում |
| **Կատարման չափանիշներ** | ա. ճիշտ յուրացնել տնտեսագիտական մինիմալ բառարանը,<br>բ. ճիշտ կատարել իրեն հետաքրքրող հարցադրումները և ստանալ պատասխանները, |

| | |
|---|---|
| | գ. ճիշտ ներկայացնել բառակապակցությունները և նրանց երկակի ընկալումը տնտեսագիտական թարգմանության ժամանակ,<br>դ. ճիշտ տալ մասնագիտական տերմինների և կապակցությունների դասակարգումը: |
| Ուսումնառության արդյունք 5 | Իմանալ ֆինանսական ինստիտուտների և բանկերի տեսակները Մեծ Բրիտանիայում և նրանց գործառույթները |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ կազմել իր սեփական տնտեսագիտական բառարանը,<br>բ. ճիշտ կազմել իր սեփական ֆինանսական բառարանը,<br>գ. ճիշտ ներկայացնել իր մտքերը մասնագիտական տեքստերի վերաբերյալ,<br>դ. ճիշտ ներկայացնել գործառույթները բանկերում: |
| Ուսումնառության արդյունք 6 | Իմանալ տերմինային և ընդհանուր գործածության բառապաշարի թարգմանությունը |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ բացատրել տրված մոդելները և կազմել ինքնուրույն իրավիճակներ,<br>բ. ճիշտ ստուգել և ամրապնդել տեքստերի ակտիվ բառապաշարը,<br>գ.  ճիշտ պատկերացնել տերմիններն ու քերականական նյութերը,<br>դ. ճիշտ բացատրել և զարգացնել բանավոր խոսքը: |
| Ուսումնառության արդյունք 7 | Իմանալ Հայաստանի բանկային համակարգը |
| Կատարման չափանիշներ | ա. ճիշտ բացատրել գործարար թեմաներով հարցազրույցներ,<br>բ. ճիշտ ներկայացնել դրամի սահմանումը և դրամի գործառույթները,<br>գ. ճիշտ բացատրել մարկետինգի և միջազգային առևտրի պահանջները,<br>դ. ճիշտ ներկայացնել բիզնեսին վերաբերող նամակներն ու երկխոսությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ-4-09-012 |
| Մոդուլի նպատակը | Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ պետական ֆինանսների՝ պետական բյուջեի, արտաբյուջետային հիմնադրամների, պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսների կազմակերպման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 72 ժամ |
| Մուտքային պահանջները | «ՖԻՆ-4-09-003» մոդուլի իմացություն: |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| Ուսումնառության արդյունք 1 | Պետք է ունենա ետական բյուջեի վերաբերյալ իմացություն |
| Կատարման չափանիշներ | ա.բացատրել՝ պետական բյուջեի դերը և նշանակությունը,<br>բ. բնութագրել բյուջետային համակարգը,<br>գ. ներկայացնել պետական բյուջեի եկամուտների կազմը և կառուցվածքը,<br>դ. ներկայացնել պետական բյուջեի ծախսերի կազմը և կառուցվածքը: |
| Ուսումնառության արդյունք 2 | Պետք է ունենա արտաբյուջետային հիմնադրամների վերաբերյալ իմացություն |
| Կատարման չափանիշներ | ա.   բացահայտել արտաբյուջետային հիմնադրամների դերը և նշանակությունը ֆինանսական համակարգում,<br>բ.   նկարագրել արտաբյուջետային հիմնադրամների եկամուտների աղբյուրները,<br>գ.   նկարագրել արտաբյուջետային հիմնադրամների ծախսերի ուղղությունները: |
| Ուսումնառության արդյունք 3 | Պետք է ունենա պետական առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների վերաբերյալ իմացություն |
| Կատարման չափանիշներ | ա. մեկնաբանել պետական առևտրային կազմակերպությունների հիմնադրման պատճառները,<br>բ. նկարագրել պետական ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման պատճառները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ»** | |
| Մոդուլի դասիչը | ՖԻՆ-4-09-013 |
| Մոդուլի նպատակը | Ուսանողին տրամադրել անհրաժեշտ առաջնային գիտելիքներ արժեթղթերի շուկայի շրջանառության կարգավորման |

| | |
|---|---|
| | օրենսդրության, ֆինանսական շուկայի հատվածների, մասնակիցների և գործիքների վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՖԻՆ-4-09-003» մոդուլի իմացություն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է ընկալի ֆինանսական շուկայի, դրա հատվածները և գործառույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել ֆինանսական շուկայի հատվածները,<br>բ. ներկայացնել ֆինանսական շուկայի նպատակներն ու խնդիրները,<br>գ. բացատրել ֆինանսական շուկայի գործառույթները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա դրամի շուկայի, ֆինանսական գործիքները և մասնակիցներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել դրամի շուկան,<br>բ. ներկայացնել դրամի շուկայի մասնակիցներին,<br>գ. թվարկել և նկարագրել դրամի շուկայի գործիքները,<br>դ. ներկայացնել դրամի շուկայի գործառնությունները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա կապիտալի շուկայի, ֆինանսական գործիքները և մասնակիցներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել կապիտալի շուկան,<br>բ. ներկայացնել կապիտալի շուկայի մասնակիցներին,<br>գ. թվարկել և նկարագրել կապիտալի շուկայի գործիքները,<br>դ. ներկայացնել կապիտալի շուկայի գործառնությունները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է պատկերացնի ֆինանսական ինստիտուտների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել ֆինանսական ինստիտուտների դերը շուկայական տնտեսության պայմաններում,<br>բ. թվարկել ֆինանսական ինստիտուտները,<br>գ. ներկայացնել ֆինանսական ինստիտուտների խնդիրներն ու գործառույթները: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Պետք է իմանա արժեթղթերի շուկայի, ֆինանսական գործիքները և մասնակիցներին |
| **Կատարման չափանիշներ** | ա. ունենալ արժեթղթերի շուկայի շրջանառության կարգավորման օրենսդրության վերաբերյալ պատկերացում,<br>բ. թվարկել և ներկայացնել արժեթղթերի տեսակները,<br>գ. ներկայացնել արժեթղթերի շուկայի մասնակիցներին,<br>դ. ներկայացնել արժեթղթերի շուկայի գործառնությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ»** | |
| **Մոդուլի դասիչը** | ՖԻՆ-4-09-014 |
| **Մոդուլի նպատակը** | Տրամադրել ուսանողին ընդհանուր գիտելիքներ ֆինանսատնտեսական գործունեության իրավական կարգավորման վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 36 ժամ |
| **Մուտքային պահանջները** | Չկան |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա ֆինանսական իրավունքի տեղն իրավունքի համակարգում |
| **Կատարման չափանիշներ** | ա. պետք է կարողանա սահմանել ՀՀ ֆինանսական համակարգը,<br>բ. պետք է կարողանա բնութագրել ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինների իրավական վիճակը, |

| | |
|---|---|
| | գ. պետք է կարողանա ներկայացնել ֆինանսական գործունեության իրավական ձևերը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա ֆինանսական իրավունքի առանձնահատկությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել ֆինանսական իրավունքի առանձնահատկությունները և կապն իրավունքի մյուս ճյուղերի հետ,<br>բ. ներկայացնել ֆինանսական իրավունքի սկզբունքները,<br>գ. բնութագրել ֆինանսական իրավունքի խնդիրները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Ֆինանսաիրավական նորմերը և հարաբերությունները |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել ֆինանսաիրավական նորմերի հասկացությունը,<br>բ. թվարկել ֆինանսաիրավական նորմերի տեսակները,<br>գ. ներկայացնել ֆինանսաիրավական հարաբերությունների սուբյեկտներին,<br>դ. Ներկայացնել ֆինանսաիրավական հարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման հիմքերը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Ֆինանսական վերահսկողությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել ֆինանսական վերահսկողությունը, թվարկել դրա խնդիրները,<br>բ. բնութագրել ֆինանսական վերահսկողությունն իրականացնող պետական մարմինների համակարգը,<br>գ. ներկայացնել ֆինանսական վերահսկողությունը ձևերն ու մեթոդները,<br>դ. ներկայացնել ստուգումներ իրականացնող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | «ՖԻՆ-4-09-015» |
| **Մոդուլի նպատակը** | Տրամադրել ուսանողին գիտելիքներ տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ստորաբաժանումների աշխատանքների՝ համայնքի բյուջետային գործընթացի վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՖԻՆ-4-09-014» մոդուլի իմացություն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել համայնքի ղեկավարի խնդիրները և գործառույթները,<br>բ. ներկայացնել համայնքի ավագանու խնդիրները և գործառույթները,<br>գ. բնութագրել տեղական ինքնակառավարման մարմինների ստորաբաժանումների խնդիրները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա համայնքի վարչական բյուջեի եկամուտների և ծախսերի կազմը և կառուցվածքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. համայնքի վարչական բյուջեի եկամուտների կազմը և կառուցվածքը,<br>բ. համայնքի վարչական բյուջեի ծախսերի կազմը և կառուցվածքը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտների և ծախսերի կազմը և կառուցվածքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտների կազմը և կառուցվածքը,<br>բ. համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերի կազմը և կառուցվածքը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է իմանա ֆինանսական համահարթեցման անհրաժեշտությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի միջև անհամապատասխանության հետևանքները,<br>բ. բնութագրել ֆինանսական համահարթեցման նշանակությունը,<br>գ. ներկայացնել դոտացիան, սուբսիդիան և սուբվենցիան: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ»** | |
| **Մոդուլի դասիչը** | «ՖԻՆ 4-09-016» |
| **Մոդուլի նպատակը** | Ուսանողին տրամադրել անհրաժեշտ ընդհանուր գիտելիքներ ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության և |

| | |
|---|---|
| | ապահովության համակարգի, կենսաթոշակների, նպաստների հաշվարկման և դրանց տեսակների վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՖԻՆ-4-09-003» մոդուլի իմացություն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա սոցիալական ապահովագրության և ապահովության համակարգի ընդհանուր բնութագիրը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բացահայտել սոցիալական ապահովագրության էությունն ու անհրաժեշտությունը,<br>բ. բացահայտել սոցիալական ապահովության էությունն ու անհրաժեշտությունը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա սոցիալական ապահովագրության և ապահովության համակարգի եկամուտների աղբյուրները |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել գործատուի կողմից կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը և կատարել դրա հաշվարկը:<br>բ. բնութագրել վարձու աշխատողի կողմից կատարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը և կատարել դրա հաշվարկը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա կենսաթոշակների և նպաստների տեսակները և դրանց հաշվարկումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. նկարագրել սոցիալական ապահովագրության կենսաթոշակների և նպաստների տեսակները,<br>բ. նկարագրել սոցիալական ապահովության կենսաթոշակների և նպաստների տեսակները,<br>գ. ներկայացնել կենսաթոշակների և նպաստների հաշվարկման կարգը: |
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ»** | |
| **Մոդուլի դասիչը** | «ՖԻՆ-4-09-017» |
| **Մոդուլի նպատակը** | Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ կազմակերպությունների ֆինանսների կազմակերպման և կառավարման վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 108 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՖԻՆ-4-09-003» մոդուլի իմացություն: |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա կազմակերպության ֆինանսների բովանդակությունը և գործառույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել կազմակերպության ֆինանսները և բացատրել գործառույթները,<br>բ. բնութագրել կազմակերպության ֆինանսների կազմակերպման սկզբունքները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա կազմակերպության ակտիվների և պասիվների կազմն ու կառուցվածքը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել կազմակերպության ակտիվների կազմն ու կառուցվածքը,<br>բ. ներկայացնել կազմակերպության պասիվների կազմն ու կառուցվածքը: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա կազմակերպության հասույթը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել կազմակերպության հասույթը որպես կարևոր ֆինանսական ցուցանիշ,<br>բ. դասակարգել հասույթի հիմնական տեսակները,<br>գ. մեկնաբանել կազմակերպության հասույթի վրա ազդող գործոնները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է իմանա կազմակերպության ծախսերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. խմբավորել կազմակերպության ծախսերը,<br>բ. բնութագրել կազմակերպության հաստատուն, փոփոխուն և խառը ծախսերը,<br>գ. նկարագրել ծախսերի նախընտրելի կառուցվածքը: |
| **Ուսումնառության արդյունք 5** | Պետք է իմանա կազմակերպության շահույթը և շահութաբերությունը |

| | |
|---|---|
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել շահույթի տնտեսագիտական բովանդակությունը,<br>բ. մեկնաբանել շահույթի վրա ազդող գործոնները,<br>գ. ներկայացնել շահութաբերությունը որպես կազմակերպության արդյունավետ գործունեության գնահատման ցուցանիշ: |
| Ուսումնառության արդյունք 6 | Պետք է իմանա կազմակերպության ֆինանսական պլանավորման և կանխատեսման անհրաժեշտությունը |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել կազմակերպության ֆինանսական պլանավորման և կանխատեսման դերը և նշանակությունը,<br>բ. ներկայացնել ֆինանսական պլանավորման մեթոդները,<br>գ. մեկնաբանել ֆինանսական պլանավորման տեղը կազմակերպության հեռանկարային զարգացման ծրագրերում: |
| ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ» | |
| Մոդուլի դասիչը | «ՖԻՆ-4-09-018» |
| Մոդուլի նպատակը | Տրամադրել ուսանողին հիմնարար գիտելիքներ վիճակագրական տվյալների հավաքման, մշակման և վերլուծության մեթոդների զանգվածային տվյալների ընդհանրացման և վիճակագրական օրինաչափությունների՝ վարիացիայի, բաշխման, դինամիկայի և փոխադարձ կապերի առանձնահատկությունների բացահայտման վերաբերյալ: |
| Մոդուլի տևողությունը | 36 ժամ |
| Մուտքային պահանջները | Չկան |
| Մոդուլի գնահատման կարգը | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| Ուսումնառության արդյունք 1 | Պետք է իմանա վիճակագրության խնդիրները և կազմակերպումը |
| Կատարման չափանիշներ | ա. սահմանել վիճակագրության առարկան և մեթոդները,<br>բ. ներկայացնել վիճակագրության խնդիրները շուկայական տնտեսության անցման շրջանում: |
| Ուսումնառության արդյունք 2 | Պետք է իմանա վիճակագրության դիտարկումներ |
| Կատարման չափանիշներ | ա. մեկնաբանել վիճակագրական դիտարկման հիմնական կազմակերպական ձևերը, տեսակներն ու եղանակները,<br>բ. ներկայացնել վիճակագրական դիտարկման սխալները,<br>գ. ներկայացնել վիճակագրական  հատուկ դիտարկումներ: |
| Ուսումնառության արդյունք 3 | Պետք է իմանա վիճակագրության ամփոփում, աղյուսակներ, գրաֆիկական մեթոդը վիճակագրության մեջ, խմբավորումներ |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել  վիճակագրական աղյուսակներ, դրանց կազմումը,<br>բ. ներկայացնել վիճակագրության մեջ օգտագործվող գրաֆիկների հիմնական տեսակները,<br>գ. ներկայացնել վիճակագրական խմբավորումների տեսակները և բաշխման շարքերը: |
| Ուսումնառության արդյունք 4 | Պետք է իմանա ընդհանրացնող վիճակագրական ցուցանիշներ |
| Կատարման չափանիշներ | ա. ներկայացնել ընդհանրացնող ցուցանիշների դերը և նշանակությունը,<br>բ. ներկայացնել բացարձակ մեծություններ, դրանց հիմնական տեսակները,<br>գ. ներկայացնել հարաբերական մեծություններ, դրանց դերը և հիմնական տեսակները: |
| Ուսումնառության արդյունք 5 | Պետք է իմանա միջին մեծություններ |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել միջին մեծության էությունը և նշանակությունը,<br>բ. ներկայացնել միջինի տեսակները և դրանց հաշվումը,<br>գ. ներկայացնել մոդա և մեդիանա, դրանց նշանակությունն ու հաշվարկման ձևերը: |
| Ուսումնառության արդյունք 6 | Պետք է իմանա վարիացիայի ցուցանիշներ |
| Կատարման չափանիշներ | ա. բնութագրել վարիացիայի ցուցանիշները, վարիացիայի թափը,<br>բ. ներկայացնել միջին գծային շեղում, միջին քառակուսային շեղում,<br>գ. երկայացնել դիսպերսիա, վարիացիայի հարաբերական ցուցանիշները,<br>դ. Ներկայացնել ընդհանուր դիսպերսիա, միջխմբային և ներխմբային դիսպերսիաներ, դիսպերսիաների գումարային կանոնը: |

| | |
|---|---|
| **Ուսումնառության արդյունք 7** | Պետք է իմանա ընտրանքային դիտարկում |
| **Կատարման չափանիշներ** | ա. մեկնաբանել ընտրանքային դիտարկման տեսական հիմքերը, նրա կիրառման պատճառները և պայմանները,<br>բ. ներկայացնել գլխավոր և ընտրանքային համախմբեր, ընտրանքի սխալը,<br>գ. ներկայացնել ընտրանքի օպտիմալ ծավալի որոշումը,<br>դ. ներկայացնել գլխավոր համախմբից միավորների ընտրության եղանակները՝ բուն-պատահական, մեխանիկական, սերիական, տիպոլոգիական, պահային: |
| **Ուսումնառության արդյունք 8** | Պետք է իմանա դինամիկայի շարքեր և դրանց վերլուծությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել հասկացություն դինամիկայի շարքերի մասին, դրանց բնութագրող հիմնական վիճակագրական ցուցանիշները,<br>բ. ներկայացնել տրենդի որոշման նպատակով դինամիկայի շարքի մշակման հիմնական մեթոդները՝ միջակայքերի խոշորացում, սահող միջինով հարթեցում, վերլուծական հավասարեցում,<br>գ. ներկայացնել սեզոնային տատանումների ուսումնասիրումը և չափումը դինամիկայի շարքերում: |
| **Ուսումնառության արդյունք 9** | Պետք է իմանա ինդեքսները |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել ինդեքսների դերը տնտեսական վերլուծության մեջ, անհատական և ամփոփ ինդեքսներ,<br>բ. ներկայացնել միջին ինդեքսներ, Լայսպեյրեսի, Պաաշեի, Ֆիշերի ինդեքսները,<br>գ. ներկայացնել ինդեքսների փոխադարձ կապերը: |
| | **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ»** |
| **Մոդուլի դասիչը** | «ՖԻՆ-4-09-019» |
| **Մոդուլի նպատակը** | Ուսանողին տրամադրել անհրաժեշտ գիտելիքներ ՀՀ բյուջետային կառուցվածքի, բյուջետային գործընթացի, բյուջետային քաղաքականության վերաբերյալ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՊՖ-4-09-014» մոդուլի իմացություն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլը համարվում է ձեռք բերված, եթե բոլոր արդյունքների համար կատարման չափանիշները բավարար չափով ապահովվել են: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա բյուջետային համակարգի հասկացությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել բյուջետային համակարգը,<br>բ. բնութագրել բյուջետային համակարգի կառուցման սկզբունքները,<br>գ. ներկայացնել համախմբված բյուջեի կառուցվածքը: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա բյուջետային գործընթաց |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել բյուջեի կազմման աշխատանքները,<br>բ. ներկայացնել բյուջեի քննարկման և հաստատման աշխատանքները,<br>գ. ներկայացնել պետական բյուջեի մասին օրենքի կատարման և ամփոփման աշխատանքները: |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա բյուջետային ծախսերը և դրանց դասակարգումը |
| **Կատարման չափանիշներ** | ա. բնութագրել պետական բյուջեի ծախսերի գործառնական դասակարգումը,<br>բ. բնութագրել պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգումը,<br>գ. բնութագրել պետական բյուջեի ծախսերի վարչական դասակարգումը,<br>դ. ներկայացնել պետական միջնաժամկետ ծախսերի դերը: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է իմանա բյուջետային անհավասարակշռվածություն |
| **Կատարման չափանիշներ** | ա. սահմանել պետական բյուջեի անհավասարակշռվածության դեպքերը,<br>բ. ներկայացնել պետական բյուջեի հավելուրդը,<br>գ. ներկայացնել պետական բյուջեի պակասուրդը, |

| | |
|---|---|
| | դ. նկարագրել պետական բյուջեի պակասուրդի ծածկման աղբյուրները: |
| | **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ»** |
| **Մոդուլի դասիչը** | «ՖԻՆ-4-09-020» |
| **Մոդուլի նպատակը** | Ուսանողին տրամադրել փողի, դրամաշրջանառության, կանխիկ և անկանխիկ հաշվարկների վերաբերյալ գիտելիքներ: |
| **Մոդուլի տևողությունը** | 72 ժամ |
| **Մուտքային պահանջները** | «ՏԳՏՀ-4-09-002» մոդուլի իմացություն |
| **Մոդուլի գնահատման կարգը** | Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է: Անցումային գնահատական շնորհելիս դասավանդողը պետք է համոզված լինի, որ ուսանողը կկարողանա ցուցադրել այդ հմտությունները ցանկացած պարագայում: |
| **Ուսումնառության արդյունք 1** | Պետք է իմանա փողը և դրա գործառույթները |
| **Կատարման չափանիշներ** | ա. պատկերացնել փողի անհրաժեշտությունը և դերը,<br>բ. թվարկել և նկարագրել փողի գործառույթները: |
| **Ուսումնառության արդյունք 2** | Պետք է իմանա ՀՀ դրամական համակարգը |
| **Կատարման չափանիշներ** | ա. ներկայացնել ՀՀ դրամի ներդրումը տնտեսության մեջ,<br>բ. բնութագրել ՀՀ ԿԲ-ի դերը դրամի թողարկման և շրջանառություն կազմակերպման գործում, |
| **Ուսումնառության արդյունք 3** | Պետք է իմանա կանխիկ և անկանխիկ դրամաշրջանառությունը |
| **Կատարման չափանիշներ** | ա. նկարագրել ՀՀ ԿԲ-ի դերը կանխիկ դրամաշրջանառության կազմակերպման գործում,<br>բ. նկարագրել ՀՀ ԿԲ-ի դերը անկանխիկ դրամաշրջանառության կազմակերպման գործում,<br>գ. մեկնաբանել անկանխիկ դրամաշրջանառության սկզբունքները: |
| **Ուսումնառության արդյունք 4** | Պետք է իմանա անկանխիկ հաշվարկների ձևերը |
| **Կատարման չափանիշներ** | ա. թվարկել վճարային փաստաթղթերի տեսակները,<br>բ. նկարագրել անկանխիկ հաշվարկների ձևերն ու եղանակները: |

Աղյուսակ 3

Միջին մասնագիտական կրթության 0603 «Ֆինանսներ» մասնագիտության «Ֆինանսիստ» որակավորման մասնագետի օրինակելի ուսումնական պլան

| N | Դասընթացներ, առարկաներ և մոդուլներ | Շաբաթնե-րի թիվը | Ուսանողի առավելագույն բեռնվածու-թյունը, ժամ | Պարտադիր լսարանային պարապմունք ներ, ժամ | Ուսուցման երաշխա-վորվող տարին |
|---|---|---|---|---|---|
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1 | Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ | | 108 | 72 | I |
| 2 | Ռուսաց լեզու | | 108 | 72 | I |
| 3 | Օտար լեզու | | 108 | 72 | I |
| 4 | Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ | | 80 | 54 | I |
| 5 | Իրավունքի հիմունքներ | | 54 | 36 | I |
| 6 | Պատմություն | | 80 | 54 | I |
| 7 | Ֆիզիկական կուլտուրա | | 114 | 114 | I , 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **652** | **474** | |
| | ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1 | Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր | | 27 | 18 | I |
| 2 | Էկոլոգիայի հիմունքներ | | 54 | 36 | I |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **81** | **54** | |
| | ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | |
| 1 | Հաղորդակցման հմտություններ | | 60 | 36 | I |
| 2 | Համակարգչային օպերատորության հիմունքներ | | 120 | 72 | I |
| 3 | Անվտանգություն և առաջին օգնություն | | 30 | 18 | I |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **210** | **126** | |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1 | Ֆինանսների ներածություն | | 54 | 36 | I |
| 2 | Տնտեսագիտության տեսության հիմունքներ | | 108 | 72 | I |
| 3 | Ֆինանսների հիմունքներ | | 108 | 72 | I |
| 4 | Հաշվապահական հաշվառման հիմունքներ | | 108 | 72 | I |
| 5 | Մաթեմատիկական հաշվարկների հիմունքներ | | 54 | 36 | I |
| 6 | Ֆինանսային մաթեմատիկա | | 162 | 108 | I , 2 |
| 7 | Ֆինանսական հաշվարկներ EXCEL ԿԾՓ-ի միջավայրում | | 54 | 36 | 2 |
| 8 | ՀՀ հարկային օրենսդրություն | | 108 | 72 | I |
| 9 | Ապահովագրության հիմունքներ | | 54 | 36 | I |
| 10 | Բանկային գործի հիմունքներ | | 108 | 72 | I |
| 11 | Մասնագիտական անգլերեն | | 108 | 72 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **1026** | **684** | |
| | ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ | | | | |
| 1 | Պետական ֆինանսներ | | 108 | 72 | I , 2 |
| 2 | Ֆինանսական շուկաներ | | 108 | 72 | I , 2 |
| 3 | Ֆինանսական իրավունք | | 54 | 36 | 2 |
| 4 | Տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսներ | | 108 | 72 | 2 |
| 5 | Սոցիալական ապահովագրություն և ապահովություն | | 108 | 72 | I , 2 |
| 6 | Կազմակերպությունների ֆինանսներ | | 162 | 108 | 2 |
| 7 | Ընդհանուր վիճակագրության հիմունքներ | | 54 | 36 | 2 |
| 8 | Բյուջետային համակարգ | | 108 | 72 | 2 |
| 9 | Դրամական համակարգ | | 108 | 72 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **918** | **612** | |
| | **ԸՆՏՐՈՎԻ** | | **99** | **66** | 2 |
| | **ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ** | | **54** | **36** | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **57** | **3040** | **2052** | |
| | **ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **200** | **200** | |
| | **ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ** | | | | |
| | **ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ** | **17** | | | |
| | **ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ** | **6** | | | |
| | **ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ** | **2** | | | |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **82** | | | |